# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն  ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք  հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

13 մարտի 2020 թվական

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (ինը) անդամներ:

Բացակա էին Ավետիք Ասոյանը և Հայկազ Բաղդասարյանը:

**<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Մուշեղ Հարությունյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը և աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը:

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>**

**<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>**

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են ինը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 13-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3.2019 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին:

5.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Նուռնուս բնակավայրում համայնքային կենտրոնի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի և բակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 75–Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի N 78–Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վահրամ Ապրեսյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

12.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

13.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Արման Խանզադյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

14.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդևանյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

15.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Հայկազ Բաղդասարյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 12-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և 29-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և պահուստային ֆոնդից գումար հատկացնել՝ որոշմամբ հաստատված հավելվածի 2, 3 և 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 13-Ն/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի՝ *ավագանին որոշում է.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ա/

*Լսեցին*

*2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ *ավագանին որոշում է.*

1.Ընդունել ի գիտություն 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ա/

*Լսեցին*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 16-Ա/

*Լսեցին*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված համայնքում հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, կառուցված մայթեր ունենալու անհրաժեշտությամբ՝ *ավագանին որոշում է.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և հիմնանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 17-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆՈՒՌՆՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում նոր ժամանակակից համայնքային կենտրոն ունենալու անհրաժեշտությամբ՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Նուռնուս բնակավայրում համայնքային կենտրոնի կառուցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 18-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՋՐԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված Ջրաբեր բնակավայրում ջրամատակարարման ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 19-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ԲԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի և բակի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 20-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 75–Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և նրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 21-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների

հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ստասիկ Սարգսի Սիմոնյանի դիմումը՝ ավագանին որոշում է՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի «Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N 54 բանակարանն անհատույց Ստասիկ Սարգսի Սիմոնյանի ընտանիքին օտարելու մասին» N 78–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման վերնագրում «Ստասիկ Սիմոնյանի ընտանիքին» բառերը փոխարինել «Ստասիկ Սարգսի Սիմոնյանին» բառերով,

2)որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 31.86 քմ ընդհանուր մակերեսով 54 բնակարանը (նախկին II փողոց 1-ին հանրակացարան 60 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Ստասիկ Սարգսի Սիմոնյանին՝ ծնված 1955 թվականի հունվարի 1-ին:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 22-Ա/

***<u>Լսեցին</u>***

***ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/***

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի և հիմք ընդունելով ավագանու նիստերից համայնքի ավագանու անդամ Վահրամ Ապրեսյանի բացակայության արձանագրված պատճառները՝ *ավագանին որոշում է.*

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վահրամ Ապրեսյանի բացակայելը համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 9 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց

*Լսեցին*

*ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջևկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի և հիմք ընդունելով ավագանու նիստերից համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի բացակայության արձանագրված պատճառները՝ *ավագանին որոշում է.*

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի բացակայելը համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 9 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց

*Լսեցին*

*ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջևկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի և հիմք ընդունելով ավագանու նիստերից համայնքի ավագանու անդամ

Արման Խանզադյանի բացակայության արձանագրված պատճառները՝ ***ավագանին որոշում է.***

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Արման Խանզադյանի բացակայելը համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 9 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց

*Լսեցին*

***ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Ջեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի և հիմք ընդունելով ավագանու նիստերից համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդևանյանի բացակայության արձանագրված պատճառները՝ ***ավագանին որոշում է.***

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդևանյանի բացակայելը համարել անհարգելի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 9 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց

Քանի որ ավագանու անդամ Հայկազ Բաղդասարյանը բացակայում էր ավագանու նիստից, նրա բացակայությունների վերաբերյալ հարցի քննարկումը հետաձգվեց ավագանու հաջորդ նիստին, որտեղ այն կքննարկվի անկախ նրա ներկայությունից:

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

**Ավագանու անդամներ՝**

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ _____

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ _____

3.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ _____

4.ԽԱՆՋԱԴՅԱՆ ԱՐՄԱՆ _____

5.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ _____

6.ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ _____

7. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

8.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ _____

9.ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ